

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Փետրվարի 28-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 73 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսունութ, աշխատանքի տեղավորման՝ երեսունչորս, բնակարանով ապահովելու խնդրանքով՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության բոլոր դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետ Վ. Հակոբյանի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ուսումնասիրման ընթացքի մեջ է գտնվում բնակարանով ապահովելու մասին դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ